ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Սամվել Գրիգորյանը, Գոռ Մկրտչյանը, Վարդան Սամսոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Սաշիկ Գրիգորյան, Միհրան Մելքումյան, Կարեն Մնացականյան, Մանուկ Հովհաննիսյան, Սերոբ Միքայելյան, Սեդրակ Սաֆարյան, Սամվել Գարսեվանյան , Մարոզ Սարիբեկյան, Սիլվա Գրիգորյան, Հասմիկ Մելքումյան, Լուսինե Զոբանյան, Ահմեդ Խդրյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարոզ Սարիբեկյանը
Լսեցին
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17 -Ի ԹԻՎ 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 17 -րդ հոդվածի ,14-րդ հոդվածի 6-րդ մասի ,համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ակունք համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17 -ի թիվ 1 արտահերթ նիստի օրակարգը

1. Ակունք համայնքի ավագանու 2020 թվականի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին
2. Ակունք համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 13-ի N 61 -Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3. Ակունք համայնքի 2019թվականի գույքագրման ամենամյա փաստաթղթերի հաստատման մասին
4. Հաղորդում Ակունք համայնքի 2019թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման մասին
5. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին

6. Հայաստանի Հանրապետության 2020թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով Ակունք համայնքում իրականացվող ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը հաստատելու մասին
7.Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 59-Ա և 60-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 1/

Լսեցին
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐՈՂ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի ,համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Ակունք համայնքի ավագանու 2020 թվականի հերթական նիստերի ժամանակացույցը , համաձայն հավելվածի՝
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից :

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 2/

Լսեցին
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 61 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն « Նորմատիվ իրավական ակտերի մասին » օրենքի 33-րդ հոդվածի ,համայնքի ավագանին որոշում է՝

1.Ակունք համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 13-ի « Ակունք համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին » N 61-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3-Ն/
Լսեցին
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ/

Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի ,«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին » օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի , Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N2-Ն հրամանով հաստատված կարգի , համայնքի ավագանին ՝ որոշում է՝

1. Հաստատել Ակունք համայնքի 2019 թվականի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը ,համաձայն հավելվածի :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 4/

Լսեցին
ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ,«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին » օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի ,համայնքի ավագանին՝ որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի հաղորդումը Ակունքի համայնքի 2019 թվականի չորրորդ եռամսյակի բյուջեի
կատարման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 5/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին »օրենքի 18-1-ին մասի 29-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13 կետի, հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 118 դրական եզրակացությունը,համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերից համայնքի սեփականություն հանդիսացող Հատիս բնակավայրի 0.02 հա (կադաստրային ծածկագիր՝07-040-0138-0146) այլ հողատեսք փոխադրել էներգետիկայի ,կապի ,տրանսպորտի ,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ կապի օբյեկտերի հողեր գործառնական նշանակության :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի նոյեմբերի 16-ի N 1708 -Ն որոշման , հինք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը ,Ակունք համայնքի ավագանին որոշում է '

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության
2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով
Ակունք համայնքում իրականացվող
ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 7/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 59-Ա ԵՎ 60-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին » օրենքի 33-րդ հոդվածի ,համայնքի ավագանին որոշում է՝

1.Համայնքի աագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Ակունքի համայնքապետարանի 2020 թվականի աշխատակազմի կառուցվածքը ,աշխատողների քանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » թիվ 59-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
1)որոշման հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելված 2-ի :

2.Համայնքի աագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Ակունք համայնքի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակեպության 2020 թվականի աշխատողների քանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » թիվ 60-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
1)որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի :

Համայնքի ավագնու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 8/

Ավագանու անդամներ

ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵԽԱԿ ՄԵԽԱԿՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ԷԴԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Մարոզ Սարիբեկյանը